

ստորջրեան առնուէր՝ կը յօժարէք ընդունելու թէ Միհրդատայ կտառաբն արարածութիւնը ստուգի՝ ինչպէս Ապրիանոս կը հաստատուէ, նմանորով իւր էր անոր՝ զոր Պարսից Կառավարները կը կատարէին Պատարագարտի մէջ։ Եւ սաի նոյն իսկ ամենահին արայք օրինակներէ մին կ'ըլլայ այն անարիւն դոճէն, որ աւետարական ծրարաններն մէջ միակ գործ անակարէր ծնացած է։

Որ կը մատուցուէր այս գոհը յայժմոյ իշխաններն։ Ըստ հրատարակէ Բիւլիթը-Էլիւիան համարել այն բարձր լեւո՞ր որուն մասին կը խօսի Ապրիանոս. կենդանական բազմը համարել այն գաղտնիք՝ որ վառելու համար խարոյկի փայտակոյտը կը գիշերէր, իսկ բարձրակաճե շրջապատն ըսել երկրորդ փայտակոյտին տեղը։ Բայց յոյն պատմաբանին բնագրին մէջ խոսքը հակառակ կ'ընէր այս տեղին որոշելուն։ Որովհետեւ կ'ըսէ թէ խարոյկը կը նմանուէր նաւարկողներէն հարգող ստաղէ աւելն հետաւորութեամբ։ Արք երբիմ ծոգէն բաժնուած է ծովափնեայ լեանաշղթային ամրոյշ թանձրութեամբը։ Ուստի կ'ընէր այն թէ այն մեծագործ հրատարակէր։ Արք երբիմ ծոգէն Կոստանտինոսի քուն մահնին մէջ, այլ աւելի մօտ Պոնտոսի Եւբոնոսի՝ անտարակոյս այն բանակառեղոյն մասերն, ուր բունակը հաւաքուած էր։

Աօի այն փոքրիկ անստուգութիւններէն մին է՝ որոնցմով պատուած է պաշտաման մը պատմութիւնը, զոր մեր թուականութիւն յաւաքը Բ գաւորուն կը գործադրէին գունէ թէք արական թագաւորութեանց վեհապետները՝ Բիւթանիայ, Պափղազարիայ եւ Պոնտոսի։ Միայն նոր գիւտերը կրնան յերեւան հանել թէ ինչ էր անոր ծագումն եւ ինչ ձեռնարկը ունեցաւ, եւ բազմալի է որ երբիմ լեւան զիսկ կտառաբանած պետւմներով կարելի ըլլայ մանրամասն ուսումնասիրել այն արարանն՝ որ լեւան գլուխը կը կանգնէր, եւ այսպիսով կարեւանք լուսագոյն կերպով քանջնալ Միհրդատայ հարստութեան պաշտանական կրօնը։

Երբիմ գիշեր մ'անցընեկէն ետքը հիւրերու սենեկին մէջ (Իսթիլ-թոմ), ուր գիւղապետը մեր ընթերց մը պատրաստանք՝ որ աւելի առատ էր քան հասնագամ, Ամառիս վերագաղանք ապրիլ 28ի պատեղով Լոնտոն լեւան բարձրը հարաւուն։ Երեք քառորդ ամբարդուն ետքը՝ հասանք Ալէքսիէ գիւղը։ Չափական այն տապալակներն՝ որ այսու-

տեղ յառաջագոյն օրինակուած էր (Թ. 144), այսօր շոր կտորի կտրուած է, եւ կտորները գործածուած են իրեն խարիխ այն գերաններուն՝ որոնք մզկիթին տանիքը վեր կը բանեն։ Արեւմտէն գիւրին էջքով մը հասանք Ամառիս, ուր տեղուս ճիւղը յաւաք օրերը՝ արևանագրութիւններ հաւաքելու եւ վերորագելու համար։

(Ըստ Է. Բ. Տ. 4. Յ. 8.)



Մ Ա Տ Ե Ն Ա Գ Բ Ա Կ Ա Ն

Ն Կ Ա Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ի Ն Ի Ն Ե ր

Փ Ո Ւ Յ Տ Ո Ւ Պ Շ Մ Ո Ւ Թ Ե Ն Ն Վ Ե ր Ո Ւ Ե ր Ե Ն Ա
(Ըստ Է. Բ. Տ. 4. Յ. 8.)

Հայոց պատմական մատենագրութեան նախակարգ յիշատակարանները համար Բ. Մակարայեցոյ Բ. Գլխի թէ էրրեւ ձեւանկար (չարքն) եւ թէ էրրեւ ոսկեդարեան լեզուի մի օրինակելի հաստուած լինելը տեսնելուց յետոյ — զանուում ենք այժմ առաջագրուած համեմատութիւնները նշանակութեան ինչորին, Նախ՝ միտմանակն տեսնում ենք որ մի կողմից Մակարայեցոյ գրքի ոսկեդարեան լեզուի նմուշները նոյնութեամբ անցել են Ագաթանգեղոսի, Փաւստոսի, Անանիւի, Սերետոսի Ղաչարի եւ Խորենացոյ յառաջարաններին ու մատենագրական ծածօթութիւններին եւ միւս կողմից՝ նոյն Մակարայեցոյ գրքի ու գլխի ոսկեդարեան ոճերի եւ ստութիւնների փոխարէն հանդէս են եկել միեւնոյն պատմիչների գրչի տակ ջեխագրեան ստութիւնները։ Այստեղ՝ այդ երեւոյթի պատճառը պարզելուց առաջ, յիշում ենք երկու օրինակ փաւստոսի Ա. եւ Բ. գլուխներից, այդպիսի՝ ոսկեդարեան ու ջեխագրեան շրջանների հետքեր՝ կցուած իրար միեւնոյն նախագատութիւնների մէջ։

1. Ձանցեալ իրացն զառաջնոցն զգարան լաւացն եւ որ զժոցոսն հակառակ ընդդիմակալս — այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան (Գ. ա.)։

Ստորագծուած ստութիւնը, որ կցուած է ոսկեդարեան շարահիւստութեան (սեւ վերեւ մեր համեմատութիւնը եւ Նորայր Բիւզանդացիի կտրիւն... 253), ջեխագրեան է. «հայառակ ընդդիմալացն» չէ պատահալ Նորայր Բիւզանդացոյն կորիւնին վերագրուած մատենագրու-

1 Հմմտ. Darmeseter, Le Zend Avesta, III, p. LXVIII.

2 Ապրիանոս օրիւն Ելզրիս տեղեկութիւն մ'այս Ժամբն իբ արք. բայց ու խոսքը զԼ. 65: Γίνεταί τοίς πλείουσι καταφανής (նուարդներու անտանիկ կըլլար), եւ միւս գլխին սկիզբը զԼ. 70: Ἀπόπειρα τοῦ ναυτικοῦ ποιητικῶς ἔθηκε τῷ σταγαθῷ Δι... καὶ Ποσειδῶνι ἄρμα καθέσις εἰς τὸ πάλωρα, ἐπὶ Παργαλιῶνα ἡπειγέτο (ուստորագրի փորձն ընելն ետքը զհօջ ջորական Գիւսի... եւ Պոսեյդոնի կտրք մը եով ձեռնը, անպարսեց զեկ Պարփաղանիս), կը ջու ճիւղն թէ այս սեւ յիշում լեւան Պոսեյդոնի մէջ պէտք ենք փնտալել, եւ այն՝ ծովափնեայ մօտ։ Գօմարական կ'ընդունուի թէ ըլլար Ահ-Յաթը՝ երկրիս ամենաբարձր գագաթը. (սեւ վերեւ Բ, 8 9)։

թեան մէջ, «ընդդէմ», նախորդութիւնը կալ բայով եւ սրա երկրորդ տրամաով բարդուած չէ, իսկ հարկաւոր ժամանակ լինել եւ դառնալ բայերով է բազադուած:

Կ որ իւն — կացեալ յարունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին:

Ա գ ա թ. — Աջ կարի ինչ ընդդէմ մարթացեալ դառնալ արքայատուր հրամանացն:

Գ. Մակար. Գ. Ծ — իսկ որ ի բաղաբի անդ հեթանոսք էին... աւրել ինչ ոչ կարէին եւ ոչ ընդդէմ դառնալ հրամանացն արքունի, (Նորայր Բիւզանդացի, Կորիւն... 66):

Ա երկն օրինակի մէջ՝ Փաւստոսի ոճով պիտի լինէր — «եւ ոչ հակառակ ընդդէմակէ լինել հրամանացն արքունի:

2. իսկ սոցա պտորածացեան տեղիք բնական թեան եւ արժանի եղեալ չէրիմք հանգրստեան եւ Մենին Գրիգորի ի դարանաղեաց գաւառին, ի գիւղն՝ որ անուանեալ կոչն Թորգան (Գ. Բ.):

Գիմուր բայի փոխարէն անցեալ դերբայը իբրեւ, յորժամ մակայաների մօտ եւ առանց նրանց եւս հանդիպում է Կորիւնի, Ագաթանգեղոսի, Բիւզանդի եւ Մակարայեցոց գրքերում (Նորայր Բիւզանդացի, Կորիւն... 78 եւ 83), ուստի սուղորդուած հասուածի արժանի եղեալ շէրիմք հանգրստեան ոսկեգարեան սուսթեան ձեւ է, որ կարող էր այլապէս լինել. եւ արժանի եղեն շէրիմք հանգստեան (եւ) մենին Գրիգորի ի դարանաղեաց գաւառին եւ այլն: Մակայն այս ոսկեգարեան կիրառումը կցուած է մի աւանդութեան, որ ցեխադարեան շրջանում ստեղծուեց Ս. Գրիգորի ոսկորները պաշտամունքի առիթով. Գրիգոր լուսաւորչի նշխարաց գիւտը պատմում է մի ասանդութիւն (Սոփիք Զ. 10), որը նշխարաց գիւտը յիշում է Ջեննին կայսրութեան շրջանում. Միջագետքի գերիտիանոս զօրավարը Ջեննի հրամանով «բռնութեամբ յափշտակեաց զնշխարս արքայն Գրիգորի եւ ետ զալ ձեռնն Հայոց վասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսա եւ այլ ինչ եւս մասն եւ տարու զնա բոլանդակ եւ այլ մասն ինչ ի սրբոց Լուսիսիանաց ի դասանդիմուպոյն եւ ի մի տապանի եղին (Սոփիք, Զ. 10): Այս հասուածի հեղինակը, հակառակ Փաւստոսի, ոսկորների պաշտամունքը եւ Հայոց սուրբերի նշխարների յարգանքը Յունաց մէջ ընդունում է:

է. ստում ենք հակառակ Փաւստոսի, որովհետեւ սրա խմբագրողը մերժում է ոսկորների պաշտամունքը եւ լուսաւորչին յիշում է թաղուած Թորգանում. ինչպէս եւ Արթանեսին եւ Յուսիկին, համաձայն որի նաեւ Գանիէլ տեսիլքով պաշտպանում է թաղուելու եւ ոչ թէ թափառական պաշտամունքի առարկան լինելու տեսութիւնը: Այդու թէ Փաւստոսի եւ թէ Սոփիքի հեղինակները պատկերամարտութեան շրջանի մասնագիրներ են հանդիսանում. թէպէտ Սոփիքի հեղինակը բացորոշ չէ քարոզում պատկերայարգութիւնը, այլ միայն իրողութիւնն է արձանագրում աւանդութեան ցուցումով, ինչպէս բացորոշ պրօպագանդ է անում Փաւստոսի խմբագրողը:

Արդ ինչպէս մեկնել այս եւնան երեւոյթները. մի կողմից միեւնոյն գլխի մէջ տեսնում ենք ոսկեգարեան նմանաբանութիւն եւ միւս կողմից թէ պատկերամարտ ոչ ոք Գրիգորի, Արթանեսի եւ Յուսիկի թաղումն ու Գանիէլի մահն արձանագրող խմբագիր Սոփիքին հակոտնայ վաղքով եւ թէ ցեխադարեան սուսթիւններ: Գժբախտաբար մեր մասնագրութեան ներկայ խմբի համար կարեւոր աշխատութիւններ չեն կատարուած եւ մենք միայն ընդհանուր մտառումներով ստիպուած են բաւականաւա՛ր Ուստի կ'անքը, որ ով համեմատեց ցեխադարեան Եղիշէն ոսկեգարեան Մակարայեցոց գրքերի հետ, նրա համար զարմանալի չէ լինել այն, ինչ որ տեսանք արդէն մեր համեմատութիւնների վրայից, ըստ որում Եղիշէի եւ Մակարայեցոց գրքերի աւանդութիւնն աւելի հարազատ, կապն աւելի մեծ է քան թէ Բիւզանդի եւ Կորիւնի կամ Բիւզանդի եւ Ագաթանգեղոսի կապը, թող այդ. մենք ձեռքդ տակ ունինք Կորիւնի եւ նրա ենթագրեալ Թարգամանութիւնների միայն 624 նման եւ նոյն սուսթիւնների ցանկը Նորայրի աշխատութեամբ. եւ չունինք, Նորայրին իր ենթագրութեան մէջ ստոյգ ձանձաղելու համար, Կորիւնի եւ նրա ենթագրեալ Թարգամանութիւնների ցեխադարեան մասնագրութեան հետ ունեցած նոյնութիւնների եւ նմանութիւնների ցանկը, երբ կը կատարուի այդ աշխատութիւնը, Փաւստոսի, Ագաթանգեղոսի, Եւթաղի եւ Մակարայեցոց գրքերի

1. Գր. խաւսթեան իտեմնացու Բ. զմ գլխի առիթով կարծում է, որ Սոփիք Զ հասարկ աւանդութիւնը «մակուած է Փաւստոսի հիմամբ», չէրպէս ինչ լինէր արձանագրել միայն հակառակով ընթացքը տառայ կանոնութեան ինչպէս լուրջելու (ԱԲ. 1908, Արտիւ 122 ա):

Կրօնների թարգմանութիւնը լինելու հարցն այն ժամանակ միայն կարելի է սպասուած համարել: Իստոն՝ սովեզարեան եւ ցեխազարեան ստու-
 թիւնների անտարբեր կիրառումը մեկնելու հա-
 մար շատ նշանակուող եւ Ղազարի մի ցուցումը,
 առանց որի մեր եկեղեցու թիւնը պարագ պիտի
 նկատուէր: Յգէտ արեղանները Ղազարին մեղա-
 գրում էին ի միջի այլոց նաեւ նրա համար, որ
 եկեղեցում պաշտոն կատարելու ժամանակ նա
 գրքին չէր նայում, անգիր եւ վարժ ստում անց-
 նում էր, իսկ արեղանները, չը կարողանալով
 հետևել նրան, կարում էին թէ Ղազար իրե-
 նից է շարագրում. այգպիտի բամբասաններին
 Ղազար այսպէս է պատասխանում. Սաղմուտը
 պէտք է «պաշտել» եւ ոչ թէ «միշտ գգրիսն
 ի ձեռնի ունելով» խօսել զայլայլս իրբեւ զբան-
 դագուշխաւս. «Իսկ մեր երանելի վարդապե-
 տին, կցում է Ղազար իր ասածին, զամենայն
 զկտակարանս եկեղեցոյ երիցս եւ շորիցս ուսու-
 ցեալ մեզ ի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն՝
 համարս պահանջէին ի մէջ զնոյնս եւ իրբեւ
 գրաւթի Սաղմոն պաշտել մեզ հարկուորէին:
 Իսկ այժմ յաղովք ի լիբր մախողաց՝ եւ զա-
 նուանս անգամ... եկեղեցական գրեւոյ հազիւ
 կարեն գիտել եւ նստաւթ առ միմեանս լու ի
 լու այլոցն զինչպէսն խօսին (Տիգ. 1904, 201):
 Այսպիսի անգիր պաշտունները իրենց պատմա-
 գրութեան, թարգմանութեան եւ խմբագրու-
 թեան ժամանակ ոչ միայն կուրորէն, այլեւ
 աւանանին եռանդով աշխատում էին վերաբ-
 տագրել Ս. Գրքի սովեզարեան ոճը, ասութիւն-
 ները եւ մատենագրական ձեւերը՝ կից իրենց
 անհատական, տեղի եւ ժամանակի թելադրած
 առանձնայատուկ ոճարանութեան: Այդ հան-
 գամանքի հանդէպ անուշադիր լինել է սակե-
 զարեան շրջանի մատենագիր, թարգմանութիւն
 եւ խմբագիր կարծիք Կրկութիւնը, փաստասէրն եւ
 ուրիշներին հէցը միայն նրա համար որ հինգ
 մատենագրութեան մէջ 624 նման ասութիւն-
 ներ կան քիչ է եւ վաղածամ. Քնդհակառակն՝
 անիտուսփելի է որ Ս. Գրքի անգիր սերտուելու
 դարերում հայ Մակարեի գործերը հրէայ Մա-
 կարեի նկարագրի կրկութիւնը չունենար, իսկ
 հայ մատենագրութեան խմբագրական նշխար-
 ները՝ հրէայ եւ յոյն պատմաբանների ոճն ու
 պատկերը:

Այստեղ մնք աւելացրիք յոյն, որով
 հետեւ բացի Բ. Մակարայեցուց գրքի Բ. գլխից,
 խմբագրական աշխատութիւնների ժամանակ մեր
 նախնիք աչքի առաջ օրինակ են ունեցել Եւսե-

րիոսի եկեղեցական գաղտնութիւնը եւ քրոնի-
 կոնը. նրանից է անցել խորենացուն, փաստասէրն
 եւ Սեբեոսին «Ժամանակագիր կանոնք Մատե-
 նից», արտայայտութիւնը, Ղազարին ընդ բա-
 զում ճառս ժառանգից առաջնոցն պատմագրացն
 հայոց անցի (պրոկ Բ): Բացի այդ փաստասիր
 Ջ. Գպրութեան վերնագրի մէջ «Մնացուածք
 բանից ի Եայրէ», եւ Եղիշէի ու թերորդ Յեղու-
 նակի ձակատի «Արտաքոյ եօթն Յեղանակին Ու-
 թերորդ», դարձուածները փաստասիր Ջ. Գպրու-
 թեան եւ Եղիշէի ու թերորդ Յեղանակի հետ
 միասին յետին թարգմարութեան կցկցումն են
 — հետեւողութեամբ Եւսեբրիոսի, որ Ճ. Գպրու-
 թեան կցում է այս — «Միանգամայն եւ աղո-
 թիւք բովք, երանելիք Պաւլինէ, զտաներորդ
 քիրս ի վերայ այլոց գրոցս պատմութեան Եկե-
 ղեցոյ յաւելցուք դնել, ի քո սնուն ընծայելով,
 իրբեւ կնիք ողջոյն գործոյս զքեզ հուշակեցուք»
 (էջ 717, 1877, շարեանի թարգ.) բացի այդ՝
 փաստասիր խմբագրողը Եւսեբրիոսի նման պատ-
 մութիւնը ցանկացել է սկսել Քաղեոսից: Ե.
 Գպր. 22 գլխի (հմմտ. նաեւ Ջ. 21) հին
 թարգմ. «Թէ որ եպիսկոպոսք երեւելիք էին ընդ
 այն ժամանակս», նոր թարգմ. «Թէ ոչք ի ժա-
 մանակին կային եպիսկոպոսք անուանիք», վերնա-
 գրիք փաստասիր խմբագրողը ցրել է Ջ. Գպր.
 Բ գլխի ձակատին «Յաղագս եպիսկոպոսացն, որ
 երեւելիք էին յայնժմ ժամանակի ի մասինն
 յաշխարհին խոսորովու եւ այլն:

Յայժմ նկատուած ազդեանքի եւ փո-
 խառնութիւնների օրինակները սուկ խմբագրա-
 կան գործունեութեան վկան են. բայց ինչ նրան-
 ցից այնպիսիներն եւս, որոնք ցոյց են տալիս
 նաեւ խմբագրութեան կամ աղաւաղելու նպա-
 տակը. մինչդեռ շատ անգամ աղբիւր յիշատա-
 կարան անարգուած է լինում թէ պատմական
 անձնագրութեամբ եւ թէ ազգային-եկեղեցական
 արժանապատուութեան դէմ մտքեր արարաւե-
 լով, ընդհակառակն խմբագրողը հարկաւոր է
 զգում այդպիսի յիշատակարաններից օգտուել
 եւ սրբագրում ու աղաւաղում է այն. խմբա-
 գրումով են աննշան յիշատակարաններն ու
 բազմաթիւ մատենագրական անյայտ հեղինակի
 երկեր եւ յայտնիներից անգամ, չը ձանձուա-
 լու համար շրջում են պարագաները եւ նոր
 բնոյթ են ստանում աւանդութիւնները: Իսկ
 թմեւ պատահեց, որ խմբագրողը կարողացաւ
 ազգային պատմութիւնը շրջանների եւ հատոր-
 ների կատարել եւ սկզբից մինչեւ կատարածը
 անթերի պատմել, այն ժամանակ շատ աննշան

(Ղազար)

(Խորհրդացի)

սելը փորձեալ այն փառա-
տառ այնպիսի ինչ արգելք
անհամարյայտաց բանկար-
գէր ի պատմութեան իւ-
րում: Գրաւ եւ մի լիցի:
Ուստի իս անհասարի ի-
նձմ գլուխումսն իւր
ձեռնը կռնէ՝ առեմ, թէ
գուցէ այլ որ յանգուցն
եւ անհրահանգ բանիւ
լրարար ձեռն արիեալ
յիւրն՝ գրեաց զինչ պէտ-
քատ կամի: Եւ կամ զի ու-
րուք նկարեալ՝ զիտրոզ՝
այլաբանեալ Զտեռն, եւ
անհրահանգ գրեալ
նոյ յանգուցնութեանն սխա-
լանն համարեցու ծածկել:
Եւ այն յայտնի ցուցանի
ամենայն հայցողաց: Զանչի
են ոմանք ի Յոյնն, այլ
մանաւանգ առաւել յԱս-
որիս բազում սղորդիկն
գալ յայպիսի յարատա-
թիւնս արք ազեաք եւ
յայտողոցը գրեցին յիւ-
քեանց ճառ ընդունչոյն
եւ անպիտարանս եւ իսաւ-
նեալ եպիսի գիրս գիտուն
լտուցս: այլ լնորոզ մուց
ձանաթ յայտնապէս գիտ-
նոցն յայն եւ անմուցն
շաղփազփութիւնք:

Վաստակին իսոյ սալով,
եւ է ինչ՝ որ վան յայտնի
ոչ լինելոյ մեզ: Երրորդ, զի
եւ անհասարակութեան
Լոյ՝ կռնէ ի ներս - ի ընդ
քնան անպիսի: Եւ պատ-
րիկ ազգաց՝ ոչ ինչ վան
այն ազգաց, որք ի վերը-
նոյն Տիգրանոյ կարգեան,
ճառեցուք, թէ եւ բա-
զում անգամ վանս այս
ի անին ազգերոցն: այլ
միայն գրու հաստատի գե-
տեմք զինիս: Ձի որչափ
եր հնար, փախեց յաւե-
լորք եւ ի պատմութեալ բա-
նից, եւ որ ինչ յանհա-
ւասարն հայեր բանն եւ
մտածութեան: միայն զհե-
տեմք զինիս: Զոյ որչափ
երթալով ըստ կարողու-
թեան՝ որ ինչ այլուստ եւ
կամ ի մէջ զարգարոյն
եւ զՎերոյ: Զնոյն եւ
աստածոր պատրաստելով
արգելում զանթաց բանից
յու զարգարիս եւ որ զան-
հասարակութեան ի ներս -
ինչ - ի ներս - ի ներս: Եւ
զգրեց, որդէս բազում ան-
գամ, եւ այժմ ազաւեմ:
մի յաւելորոցն հարկաւ-
որիկ զմեզ: Եւ սալուս
եւ կամ յորով բանիք՝ զմեծ
եւ զհաստատի բոնազգակ
աշխատութիւնս մեր ընդ
վայր եւ աւելորոք ցոյցան-
լէ Իսի: զի նմանազոյն
որդէս ինձ՝ եւ քեզ գործէ
Կռնէ:

Բացի իմաստի եւ ոճի համեմատուող
աստիճաններից եւ երկու խմբագրողների միա-
տեսակ գրչիկներից ու նպաստակից, այդ հա-
տուածներից իւրաքանչիւրը առարկա-
ներով միեւնոյն հարցն են շարժում: Ղազարի
խմբագրող պնդում է որ փաստասիր մէջ մուտք
են գտել զինչ պէտաս, այլաբանեալ շաղփազ-
փութիւններ, բանք ինչ ոչ յարմարք եւ դե-
պոզք, որոնք ընդհանուր իմաստ ունին եւ միայն
ենթադրութեամբ կարող են վերաբերուիլ թէ
Գանիէից՝ հակասուկարայրգական այսինքն՝
պատկերամարտութեան շքրանի բառով՝ հակա-
հեթանոսական ցանկութեան, Յոհան եպիսկո-
պոսի ընչասիրութեան, Ջաւենի պճնասիրու-

թեան եւ գաւանարանական այնպիսի խնդրու-
ների մանաւանդ, որոնք փաստաւ խմբագրողը
խիստ վարպետորեն անցրել է իր սողերի մէջ,
ուստի եւ մեզ համար անզգալի են մտում, մինչ-
դեռ հին դարերում գրուածքի էական մասերն
էին կազմում, խնդիրներ, որոնք մնալ եւս չենք
յարուցանում որովհետեւ 1—2 գլուխներից
չեն բրդում, այլ կապուած են սուս հատուած-
ների եւ գլուխների բնագրական ստուգութեան
աշխատանքի հետ: Խորհրդացին նկատի ունի
միայն ֆեոդալական, սոցիալական իրաւունքը
եւ ոչ թէ գաւանարան, նա այդ ուղղակի ատում
է համեմատուող հատուածի մէջ:

Մենք չենք շարունակում փաստասիր ա-
ռաւին զլին մասին մնացած հարցերը՝ նրանց
ընդարձակութեան պատճառով թէ ինչու, երբ,
ինչ գրչիկներով են կազմուած առաւին զլուխը,
իրբեա յառաջարան, Գ զպրութիւնը իրբեւ
միջին պատմութեանն բովանդակուող իր-
թիւն, պարութիւնների դասաորութիւնը եւ
առհասարակ այն բոլոր երեւոյթները, որոնք
կապուած են ծագմանը այդպիսի մի խմբագրու-
թեան (= կեղծարարութեան) հետ: Միայն
կ'առեմք, որ արդարեւ արդարացի են Հ. Գ. Մե-
նչվիչեանն եւ Ֆր. Մուրաթի՝ այդ առաւին զլինի
աղաւաղման ենթագրութեամբ, որը կատա-
րուել է ըստ իս ԽՅՁՂ թուից յետոյ:

Բայց այնուամենայնիւ յիշաններից արդեն
երեւաց մեր կարծիքը փաստասիր պատմութեան
խմբագրութեան մասին, որով եւ մասամբ կա-
տարած ենք լինում մեր խոստման զեժ շնչին
մուտք: Վերելի հարցերին որքան եւ աարբեր
նշանակութիւն յատկացրուի մէջ եւ միւս քննա-
դասների կողմից, այնուամենայնիւ նրանք այն
էական նշանակութիւնն ունին, որ այսուհետեւ
ոչ որ փաստասիր այս կամ այն գլուխը քննա-
կան չենքի կառուցման հիմքը պիտի դնի, առանց
կանխապէս մասնաւորապէս վերլուծութեան
ենթակիւն իր հիմքը՝ նրա խիստ սայթաքե-
ցուցիչ եւ կառեմաւոր լինելով: Միեւնոյն
ժամանակ պարզուած որ Անտուռնի եւ փաւ-
ստասիր զուգորդութիւնների նկատմամբ վճռական
լուսաբանութիւն սալ չի կարող նրանց ոսկե-
զարեան լեզուի նմանների ցանկը, այդքանով
չի ժխտուում փաստասիր իրբեւ մի ընդարձակ
խմբագրութեան կարգապար յորինութեան իւ-
նելը, ինչպէս չի ժխտում Եղիշէի ցեխազա-
րեան ծագումը իր նոյնատեսակ եւ դեռ աւելի
կապով Մակարայեցոյ գրքերի՝ իրբեւ ոսկեզա-
րեան թարգմանութեան հետ: Եւս առաւել այդ

1 Եւ ոչ թէ "անկարեալ" հմն. փաստառ նախա-
գիտելի "գործեալ նկարի", իւրաքանչիւր գլխով:

նմանչեքի առաջնորդութեամբ անՏար և որեւէ եղբայրացութեան յանգել նախաժողովրդական շրջանի մասնագրութեան մասին:

Սակայն և, Մատիկեանի նկատած լեզուագիտական եւ պատմագիտական զուգորդութիւնների շարքը, որ խիստ յաղո ին ակնյայտի է, միայն այն են վկայում, որ Անանունի ծագումը եւ փաւաստի խմբագրութիւնը ժամանակով համապատասխանում են իրար. այս մէկ պարագան կազմում է փաւաստի առեղծուածի նկատմամբ և, Մատիկեանի աշխատութեան գրական կողմը, որ իր տեսակում չունի նմանը մինչեւ այժմ, Նրա ընդարձակումն նոյն ոգով կը բաղձանք մենք, եթէ Անանունի անձաւորութիւնը, իբրեւ խորհրդաւոր հարցի շեղուցիչ մի կողմը, խանգարող չը հանդիսանայ իրեն՝ ի հարկէ:

Գնեք թէ և, Մատիկեանի գաած եւ թէ Տնարաւորպէս գանուելիք ասէն լեզուագիտական զուգորդութիւն բացատրում ենք այսպէս: Անանունի ոսկեգարեան կողման հասուածները բոլորը ժողովրդական վկայի մասեր են, աւտի նրանց գրի առնուիլը որ գարում եւ կատարուած լինի՝ գարձեալ նրանք պահպանած կը լինեն իրենց մէջ ոսկեգարեան մաքրաբնութեան որչ պատկերը: Լէնք միայն այդ հաճախմանը զգաստացոյցիչ է թիւրիմացութեան մէջ ընկնելուց Անանունի խորի առիթով:

Այժմ գտնանք Անանունի տեղեւածին, որը մենք կը լուսարանենք և, Մատիկեանի եղբայրացութեան հակառակ:

Գ.

Անանուն — կնից Սերիս:



Ա. Սիւտի Աղբորնոց — օրինիլ:

Անանունին գանել ցանկացող քննադատներից եւ ճշ մէկը չի շահեցրել դրա համար անհրաժեշտ մի տեղեկութիւն, որ պահել է Սիւտին Ապարանցին Մատիկեանի եւ Պահլաւունի սոհմերի ստանալոր պատմութեան մէջ (հրատ. Էջմիածին 1870, էջ 7—33): Անանունի ներկայ ծաւալը եւ բաժանուածները Սիւտին Ապարանցու օրինակում ոչ միայն բացակայում էին, այլ նաեւ Անանունը վերագրուած էր ճշ թէ Սերէոսին, այլ Ղազար փարպեցուն, եւ կցուած էր Ղազարի Պատմութեան՝ իբրեւ «Առաջին ճառ»:

Այս տեղեկութիւնը կարեւոր է շատ կողմերով, չը նայած որ անուշագիր է թողնուած մինչեւ այժմ: Ճիշդ է՝ դրանով Անանունի հարցը չի սպասուում, բայց լուսարանում է կնից-Սերէոսի խորհրդը, բացի այդ՝ փաւաստի եւ առհասարակ Եզրայի հուշակուած մեր պատմիչների — Ղազարի, Եղիշէի եւ խորենացու — խմբագրութիւնների պատմութիւնը հարասանում է «Անանուն, Սերէոս, Ղազար», անունների տակ կորած կեղծարար հեղինակով: Կնից չիք ժամանակը, տեղեկացը, աղբիւրը եւ եղանակը լուսարանում են այնքան հանգամանորէն, որ երբեւիցէ մեր քննութեան նիւթը պիտի դառնար այդ կնիցիքը՝ իբրեւ փաւաստի խմբագրութեան ժամանակակից գրականութեան մի նշան, որին խոստացել էինք դառնալ Ազգ. Մասին, Լը. 8, 4, Ա. Մատիկեանի յարուցած հարցի առիթով այստեղ ենք կատարում այդ խոստման մի մասը. Նրան եւ առաջ ցոյց կը տանք Անանունի = Ղազարի միջնադարեան ծաւալն ու դիրքը համառոտ Սիւտին Ապարանցու տեղեկութիւնների, եւ սակաւը քննենք այն բոլոր խորհրդները, որոնք ծագում են այս նշանաւոր կեղծիցից:

Սիւտին Ապարանցին «Ղազարի առաջին ճառին» է դիմել, որովհետեւ իր նպատակն էր ոչ թէ յայտնի պատմական երկերի կրկնութիւնը ապ, այլ ընդհակառակն յայտնի երկերի հակառակ աւանդող բոլոր տեղեկութիւնները ի մի ժողովել. այդպէս հակառակ էր խորենացուն Ղազարի Առաջին ճառը, որը Սիւտին Ապարանցու գարուն է այնուհետեւ քիչ էր ասարածուած, ինչպէս այսօրուայ ձեւագրերի օրութիւնն էլ այդ ցոյց է տալիս.

Սիւտին Ապարանցին այդ ուղղակի ասում է այս սողերի մէջ

Ջհակառակոյն մտածեալ
Ջրոմնացանս խոկացեալ
Այն որ Ղազարն կոչեցեալ
Ի Մոսկէսին կարգն սկսեալ
Եւ զՃացեալսն վկայասանեալ:

Էջ 7, 8.

Ահա այդպէս Սիւտ. Ապարանցին ընհեղիղ շրջանի համար խորենացուց օգտուելուց յետոյ, համարուում է Ղազարի Առաջին ճառը՝ իբր հակառակ խորենացու, այսինքն բանաբանում է մեզ յայտնի Անանունի բովանդակութիւնը. և հարցըր եւ կարգը, որով Սիւտ. Ապարանցին յիշում է Ղազարի Առաջին ճառի բա-

վանդակութիւնը, նոյն են, ինչոր արգի Անանուն ունի. նա յիշում է 1. Մծուրնացի Մարտիրոս մատենը, 2. Ագաթանգեղոսին, 3. Հինգ թագաւորներին, 4. Բէիլ եւ Հայկի աւանդութիւնը, 5. Աւանդութիւնը մինչեւ Արտ նահապետը, 6. Շամիրամին, 7. Սենեքեբիմին, 8. Հինգ թագաւորներին եւ Փանուսայի մահը Բարեւրնում, 9. Արամի պատմութիւնը, 10. Վահէի եւ Աղէք. Մակեդոնացուն, 11. Պարթեւաց զորանալը, 12. Վաղարշակին, 13. Բագարտսին, 14. Հայ արշակունիներին, 15. Մամիկոնեաների ծագումը, 16. Մահմետի եւ չինթակուրի ընդհարումը, 17. Մարտակի սերունդը, 18. Հայաստանի բաժանուիլը Պարսից եւ Յունաց մէջ եւ այնուհետեւ այն բոլորը, ինչոր գտնում ենք այսօր Ղազարի Ա, Բ եւ Գ գրուագրերի մէջ:

Թեպէտ այս հարցերի բովանդակութիւնը՝ համեմատութեամբ արգի Անանունի նոյն է եւ կատկած չը կայ որ Ապարանցին Ղազարի Ա, ճառատելով հասկանում է այսօրուայ կեղծ-Սենեքեբի երկը, սակայն մի քանի անգամ Սիմ. Ապարանցի համառօտութիւնը չի համապատասխանում արգի Անանունի եւ կարող է կարծուել հակառակը. բարբախտաբար հէնց այդ դէպքերն են կարեւորը, որովհետեւ ամեն անգամ Սիմ. Ապարանցին մատենագրական ցուցումն է անում անհամաձայնութիւնների վերաբերեալ, հաստատելով որ իր յիշած «Ղազարի Ա. ճառը» արգի Անանունն է:

Քննելը այդ դէպքերը:

Ուստի. վերոյիշեալ հարցերից Յրդը եւ 10րդը — արամի պատմութիւնը եւ Վահէի մահը — արգի Անանուն չունի եւ Սիմ. Ապարանցու օրինակում եւս չը կային այդ կետերը. ուստի նա խորնացուց քաղելով այդ հարցերը, կանխաւ ծանօթացրել է, որ «Ղազարի Ա ճառը» (= Անանունը) չունի այդ հարցերը: Ահա նրա տողերը.

Արդ յառաջինն (խորնացուցն) կարգ դարձեալ իմ Սիմնի որ զայս ոգեալ,
 Ձի պատմութիւնս (Ղազարայ) է վերջունեալ
 Ձհայկազանցն անգիտացեալ
 Եւ նորագոյն իմն սկսեալ
 Ձքեռուրածինս ազգաբանեալ:

Այսօրուայ Անանունի հետ համեմատելով Ապարանցու քաղուածքը, արգարեւ երեւում է, որ Անանուն չունի Արամի եւ Վահէի մասին օրեւէ յիշատակութիւն, այլ քետուրածին

պարթեւների զորանալը նա տարբեր կերպով, «նորագոյն իմն» է կապում Փանուսայի Բարեւրնում մեռնելու աւանդութեան հետ:

Ղազարի թէ՛ այս պակասը եւ թէ՛ առհասարակ խորնացուն հակոտնեայ ընթացքը Ապարանցու համար առիթ էին անհանգստանալու իր աշխատութեան ապագայի նշխտաման եւ նա երկար պատճառաբանութեամբ (եղջ 21 — 23) արդարանում է տեսլով, որ Ղազարի աղբիւրը Մարաբաս փիլիսոփան է, եւ ինքը Ղազարը իրողութիւններն ստուգելուց յետոյ է ընդունում, մի խօսքով «սնտիապատուստ», ոչինչ չը կայ նրա ներհակ պատմութեան մէջ:

Երկրորդ. «Ղազարի Ա ճառը» հայ արշակունիների սերունդը յիշելուց յետոյ՝ Մովսէսէի հակառակելով, պատմում էր Մամիկոնեան տոհմի ծագումը, անկապ գիրքով, նախարարական բազմաթիւ սոհմերի ծագումը զանց անելով: Եւ Սիմ. Ապարանցին յիշելով այդ բոլորը ընթերցողների միաստութեան համար, որպէս զի խորնացու անհամաձայնութիւնով նրանք չը խրոչնէ, աւելացնում է նաեւ, որ Մամիկոնեան տոհմի ծագումը Ղազարի Ա. ճառի մէջ գրուող գրեւէ շէրք ունէր: Այս բոլորը տեսնում ենք նաեւ Անանունի = Պենե Սերեոսի մօտ եւ կատկած չը կայ, որ հարցը միեւնոյն մատենագրական նշխարին է վերաբերում: Ահա Սիմ. Ապարանցու ծանօթութիւնը.

Եւ այսքանիւք ոչ շատացեալ (Ղազարայ),
 Այլ ի յուրմի ձեռնարկեալ,
 Սերունդի ազգին զաճումն առեալ
 Մինչ ի վարդանն պսակեալ
 Չորք հարիւր եւ Հինգ ամ տեւեալ
 ՅԱրտաշէսէ թագն բարձեալ
 Ի յայս միջոց բանս լռեալ
 Ի յուրմէն գողով կասեալ
 Ձի պատմագիրն (Ղազար) ոչ ախորժեալ
 Ձքերթողն կրկնաբանեալ
 Այլ զձնաղունս յիշատակեալ
 ՁՄամիկոնեանն զեկուցեալ:
 Վասն սոցա գրուագրեալ,
 Բայց Մովսիսի ոչ ձայնակցեալ
 Ագաթանգեղեայ գոջ հետեւեալ
 Այլ որ զդեպասն ձնաց հարցեալ.
 Ի սոցանէ զստոյգն ուսեալ
 Յօրմ գրով մեզ աւանդեալ
 Մամն եւ կոնակն եւն,

«Ղարգան պատկանի», եւ Մամիկոնեան առՏմի ծագման պատմութիւններն այդպէս էին շարկապուած Ղազարի Ա. ճառի մէջ, այսինքն՝ Արշակունեաց անկումից յետոյ երբ խօսք ե հղել Ղարգան սպարապետի մասին, Ղազար այդտեղ պատմել է Մամիկոնեան առՏմի ծագումը: «Գրուագագրեալ» բառն էլ ցոյց է առիւս որ այդ հաստատելու ուրոյնացած եր կամ վերնագրով եւ կամ սոսկ նոր գրիով: Ինչ վերաբերում է այդ ծանօթութեան մէջ յիշուող թուի եւ պակասող հասուածներէ մասին, ինչպէս է՝ Արտաշէս մանուկի յիշատակութիւնը եւ Պապից յետոյ մինչեւ Արտաշէս արշակունիների սերնդի մասին ակնարկը — այդ բոլորը այսօր պակասում են Անանունի մէջ. նրանց փոխարէն Պապից յետոյ արդի Անանունը յիշում է «Գրուագագրեալ» գիրքով Մամիկոնեանների հասուածը, բայց նախակարգելով Խորենացու եւ Ասողկի քաղաւածքներով. այդ մասին երկար գրել են ուրիշները եւ մնը էլ շարունակութեան մէջ կը գաւառը գրան. միայն այս նկատելը, որ արդի Անանունի առաջին գպրութեան վախճանը ամփոփում չունի՝ անկապորեն կանգ է առնում Պապի յիշատակութեամբ եւ Սիմ. Ապարանցու քաղաւածքին չի համապատասխանում, մինչդեռ Բ. գպրութեան մէջ Մամիկոնեան առՏմի ծագումը բառացիորէն եւ Ապարանցու քաղաւածքի հետ, խառնակութիւն ակնյայտն է:

Երրորդ. Մամիկոնեանների պատմութիւնը կրճատուած է արդի Անանունի մէջ. Ղազարի Առաջին ճառը պատմում էր այդ պատմութեան կից նաեւ ձեւաց երկրի գովքը եւ ձեւացոց քաղաքապետութիւնից մի գեպք. այս պակասող մասերը Սիմ. Ապարանցին յիշում է առանց ծանօթութեան՝ թէ ինքն է քաղում որեւէ տեղից. եթէ ուղղակի Ղազարի Առաջին ճառից չը լինէին այդ հասուածները, նա կը յիշէր իր աղբիւրը, ինչպէս այդ արեւ է Արամի եւ Առահէի պատմութեան առիթներով՝ յիշելով որ Խորենացուց է լրացնում: Այդ հասուածների նշանակութիւնը ետկան է եւ նրանց կրճատումն արդի Անանունի մէջ խմբագրական նշանակութիւն ունի, ինչպէս կը տեսնելը վերջում:

Թէ ինչով էր վերջանում Ղազարի Առաջին ճառը Սիմ. Ապարանցին որոշ ցուցումն ունի. ձեւացիների քաղութիւնը վկայող մի պատմութիւնից յետոյ, առում է Ապարանցին, Ղազար անկապ կերպով պատմում է քսուութեանների գաղթը Հայաստան, որ ըստ բովանդակութեան

նոյն է «Ի Դամասկոսէ տանն զնացեալ զՄարտեանն», հաստատի հետ. արդի Անանունի մէջ Ղազարի առաջին ճառի այդ վախճանական հասուածը գտնուում է Պարթեւների զբանալու պատմութեան սկզբում. այս փոփոխութիւնն էլ վերջին խմբագրութեան ժամանակ է կատարուել, որովհետեւ Առաջին առաջին ճառի մէջ յիշեալ հասուածը անկապ եւ անմիտ նշանակութիւն ունէր նախորդի համեմատութեամբ. ահա Ապարանցու սողերն այդ մասին.

Ձայս ամենայն մեզ ծանուցեալ (ձեւաց մասին),

Եւ զՏ բանին առ այլս փոխեալ ԱՄարտակէ սկիզբն արարեալ ընթացահարս ընդոնին լուս:

Ահա այդ հասուածով վերջանում էր Ղազարի Առաջին ճառը, առում է Ապարանցին էջ 33 եւ այնուհետեւ Բ ճառը շարունակում էր փառաստի պատմութիւնը: Վերոյիշեալ առեալներով Ղազարի առաջին ճառը համեմատութեամբ արդի Անանունի ունէր հետեւեալ կարգով մի բովանդակութիւն.

1. Ղազարի առաջին ճառն սկսուում էր Անանունի 1851 թ. հրատարակութեան սկսուածքով եւ շարունակուում էր մինչեւ նրա Թրդ էջը. այդ էջն «Քանզի զայն ճառէ ժամանակագիրն» որպէս առաջից կայ, սողը վերջին նախագասութիւնն էր այդ հասուածի:

2. Գրա շարունակութիւնը Ղազարի առաջին ճառի մէջ կազմում էր նոյն Թրդ էջն՝ «Ապստամբութիւն պարթեւաց, որ եղեւ ի յայս ժամանակս վերնագիրն ու հասուածը շարունակաբար մինչեւ արդի Անանունի Ա. գպրութեան վերջը»:

3. Ղազարի առաջին ճառի մէջ այդտեղ՝ այսինքն արդի առաջին դպրութեան վերջում յիշուում էր Արշակունեաց սերնդի աճումը մինչեւ Արտաշէսից թագաւորութեան իշխանութեան զեկը պակասեալ Ղարգանին անցնելը: Արդի Անանունի մէջ այդ մասը չը կայ եւ Արշակունեաց սերնդի աճումը գաղաբում է Պապի յիշատակութեամբ:

4. Ղարգանի իրեն իշխանութիւնը ղեկավարող սպարապետի անուան կցուած էր նրա առՏմի, այն է՝ Մամիկոնեանների ծագումը «Գրուագագրեալ» գիրքով. արդի Անանունի Բ. գպրութեան ծանօթ հասուածն է այդ մասը սկսած այս սողից՝ «Եւ յետ նորա (Ալարսանայ) պայազաք նորն զնոյն ձեւ. արխնադրին զՄարտեանն»:

միտնէջին սակա ազգաց զնեղութիւնն, քանզի ոչ են սորա որդիք ազգածինն Արամանեկայ, այլ են եկեալ ի շննտասանէ՝ մինչեւ էջ 30 եւ վերջնում էր՝ «Յայսմանէ այն և սպարապետն, սորով:

5. Մամիկոնեան տոհմի ծագման պատմութիւնը Ղազարի Առաջին ճառի մէջ աւելի երկար էր քան արդի Անանունի մէջ. երկու մեծ հատուած կար այնտեղ, մէկի մէջ արուած էր շննաց երկրի բնական հարստութեան գովքը, իսկ միւսի մէջ պատմուած էր շննացիների քաղութեան մի օրինակը: Այս հատուածները քաղուածք էին խորհնացու աղբիւրից եւ Ղեւնդ պատմիչից, կամ նա աղբիւրից. նրանց մասին խօսք կը լինի յետոյ:

6. Ղազարի առաջին ճառի մէջ շննացիների քաղութիւնը պատմող հատուածին անկապօրէն կցուած էր քեաւորածինների գաղթը Հայաստան, այսինքն՝ այն հատուածը, որը արդի Անանունի մէջ սկսուում է էջ 9՝ «Ի Դամասկոսէ ասնն գնացեալ զՄարսեակն», սորով, եւ որը նոյն ծաւալն ունէր, ինչ որ արդի Անանունի ունի, մինչև «Ապստամբութիւն Պարթեւաց, որ եղև ի յոյս ժամանակս վերնագիրը»:

Ապարանցու օրինակի մէջ Ղազարի առաջին ճառը վերջնում էր քեաւորածինների գաղթի պատմութեամբ, եւ նա շուներ արդի Անանունի Բ. դպրութեան այն հատուածները, որոնք Մամիկոնեանների հատուածից առաջ եւ յետոյ են, այն և պարթեւների պատմութիւնը կրկնաբար եւ համաժամանակեայ ցանկերը:

Այս բոլորից յետոյ ամենից առաջ պէտք է ստուգել Ապարանցու ցուցումների արժանաչաւստութեան շարքը, որ կասկածից դուրս է մեր կարծիքով: Ճիշդ է, չի գտնուած «Ղազարի առաջին ճառը», բովանակող մի ձեւագիրը Ապարանցու ցուցումների ստուերագծած պատկերով, բայց երբ կերպ կարող ենք վստահել Ապարանցու խօսքերին եւ «Ղազարի առաջին ճառի», քաղուածքի թէ՛ հաւաստարմութիւնը եւ թէ՛ հատուածների հետեւողական կարգը շքմարիտ ընդունել:

Դա՛ի առձեռն ունիք Ղազարի պատմութիւնը, որը Ապարանցին շարունակել և համառուել ասանաւորով՝ սկսած Արշակի յունաց բաժինը գաղթելուց մինչև Թոհման Մանգակունտ յայտնի ճառը Դունի եկեղեցում՝ Վահանի մարզպանութեան աւիթով (Սիմ. Ապար. էջ 34—72): Համեմատութիւնը ցոյց է աւելն, որ

Ղազարի ոճակաբեր Ապարանցին անշեղ պահել է, ոչ մի անգամ հատուածները չի տեղափոխել, չի զտնց արել որեւէ պատմական նշանաւոր ամբողջութիւն, ոչ մի անգամ նշխարէ չէի օգնութեան չի գիմել լրացնելու, «ուղեւրու» եւ ոճաբանութեան համար¹:

Երկրորդ՝ Ապարանցու հարապատ եւ հաւաստարմ ընթացքի ու վարմունքի ամենալաւ վկաներն են այն երկար ու բարակ մատենագրական ծանօթութիւնները, որ նա անում է մերթ Ղազարի Ա ճառի մէջ հատուածների անկապութեան, մերթ պատմաճօր հակոտնեայ ընթացքի, մերթ պակասող բոլոր էական պատմական շրջանների մասին, ծանօթութիւնների, որոնք ապա ինքը հեղինակը լրացնում է յիշելով աղբիւրը: Մակայն Ապարանցու շքմարտախօսութեան համար ամենազրուար ապացոյցները պահուած են արդի Անանունի մէջ, որով եւ միանգամայն խնդրի այս մասը սպասուում է: Արդի Անանունի՝ համեմատութեամբ Ղազարի Ա ճառի տեղափոխուած եւ համառուած հաւատածները ստեղծել են անկապ, կեղծ դրութիւն եւ անմասն ոճակաբերութիւն. երբ այդպիսի հատուածներն իրենց տեղն ենք կարգում՝ Ղազարի Ա ճառի (— Սիմ. Ապարանցու) համաձայն, չքանում են իսկականութեան ամեն տեսակ հետքերը: Այսպէս՝ Ղազարի Ա ճառի վերում գտնում էր Մարսեակի գաղթը պատմող «Ի Դամասկոսէ ասնն գնացեալ» հատուածը, որը հիմաջ Անանունի մօտ կեղծ դիրք ունի այնպէս, որ իրար շարունակութիւն կազմող հատուածների մէջ արհեստական անբոյգեւ և հանդիսանում, որովհետեւ նրան կանխող եւ հետեւող հատուածները իմաստով կապուած են իրար հետ: Այս այդ հատուածների մերձեցումը պատկերը, ուր իրականութիւնը բազմակերպ նշանակուած է դուրս ձգուելու արժանի՝ «Ի Դամասկոսէն», հատուածը:

«Եւ ծառայեցին Մակեդոնացուց մինչև ցապստամբութիւնն Պարթեւաց եւ Մակեդոնացուց եւ ցճամբարձուց Բրազկունեայ թագաւորութեանն: Քանզի զոյն ճառէ ժամանակագիրն այդպէս, որպէս առաջիդ կայ [. . .] Ապստամբութիւն Պարթեւաց, որ եղև ի յայս ժամանակի: Եւ եղև յետ մահուանն Աղէքանդրի

¹ Իրեն եղակի բացառութիւն չկաւում է մի անգամ Ապարանցու համառուութեան եւ Ղազարի պատմութեան ստարմութիւնը. այն է Մ. խորհնացու եւ Դունի Ապարանցի յայտնի աւանդութիւնը Թեոփրոսուպոլիսի վերջնութեան մասին, որ Ղազար չունի:

Մակեդոնացոց, ծառայեցին Պարթևք Մակեդոնացոց ամս ԿԱ, եւ այլն:

Այսպիսի եւ աւելի կոպիտ անըջեալ եւ ստեղծել Անանունի Հասուածների մէջ Մամիկոնեանների Հասուածք, որը գուրս ձգելուց յետոյ պահուում է կապը խորհնացոց եւ Աստղիկից աստծ Հասուածների մէջ:

“Արտաւան” ամս ԼԶ Զատ սպանեալ Ստահրացոյն Արտաշէրի՝ որդւոյ Սասանայ, երարձ զաւերութիւնն Պահլաւաց՝ սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլղաղելիոս Պողոտեոսի կաշեալ նոցա ընդ ամենայն ամս ԿՄԻ: Յետ որոյ նուաճեալ Ստահրացոյն Արտաշէրի որդւոյ Սասանայ զամենայն արիս եւ զանարիս եւ զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեանն Պարթևեաց եւ Պահլաւաց՝ թագաւորէ ինքն՝ [․․․․․]: Եւ եղև յետ մահուանն Արտաշէրի որդւոյ Աղաշտուարայիս Պարթևեաց թագաւորաց Արտաշէր որդի Սասանայ միահեծան տերութեամբ ի վերայ Բաբելոնացոց եւ Ասորացոց եւ Մարաց եւ Պարսից եւ Պարթևեաց ամս ԿՄ. եւ այլն:

Երրորդ. Մամիկոնեանների Հասուածք վերջանում է մի սողով, որը մինչեւ այսօր չէ հասկացուած եւ որը Հ. Ա. Մամիկոնեանին հին է երեցեղն (Անանուն կամ կեղծ-Սերեսու, էջ 54): Ղազարի Ա ձառի մէջ Մամիկոնեանների Հասուածից առաջ յիշուած էին Հայ Արշակունիներից թագի բարձունքը եւ Ղարզանի պսակաւի գործերը. այդ առիթով ա՛յն վարդանի տոհմական ծագումը հետեւում էր դրան Ղազարի Ա ձառի մէջ. յետոյ կրկին ծագման պատմութիւնը փակուում էր “յայտանէ այն եւ սպարապետն նախագասութիւնով, ուր յիշուում է Ղարզանի պսակաւը, սպարապետը:

Ամփոփելով մինչև այժմ մեր ասածները Անանունի մասին, գալիս ենք այն եզրակացութեան, որ Սիմ. Ապարանցոց յետոյ՝ վերջին երեք դարերում Անանունը խմբագրուել է այնպէս, որ նրա Հասուածները տեղափոխուած են, նոր մասեր են կցուած նրան եւ ինչ ինչ մասեր նրանից գուրս են ձգուած: Ղախ քան Ապարանցին՝ Անանունը յանուանէ Ղազարի պատմութեան առաջին մասն էր, իսկ Ապարանցոց յետոյ նա դարձաւ Սերէտոսի պատմութեան

սկիզբը: Իցիւ թէ գտնուել Ապարանցու ձեռքում եղած Ղազարի պատմութեան ձեռագիրը, ուր Ա ձառի մէջ պատմուած էին սոսկ եււէ թ երեք դաղթի բարեկական, հրեական եւ ճննական, եւ զորս առճմի ծագման՝ Հայկազեան, Բազրատուն, Արշակունի եւ Մամիկոնեան պատմութիւնները. ապա վճռականապէս (իսկ արդեանս միջնորդապէս՝ Ապարանցոց ցուցմամբ) պիտի Հաստատուէր Հանգուցեալ Պր. Խալաթեանի ենթադրութիւնը թէ Անանունի Բ մասը՝ մասամբ սարբեր հեղինակի գործ է, եւ միւսն՝ գամայն ապարդին պիտի նկատուէր Սերէտոսին եւ Անանունին միացնելու փորձը: Ինչպէս որ նկատուած իսկ է վաղուց Ա. Ս. Մայիսսեանի գործը:

Մեր այս եզրակացութիւնը համարիւ է Սերէտոսի եւ Ղազարի ձեռագրերի հանդամաւորներին: Յայտնի է, որ Էջմիածնի թիւ 611 == հին ցուցակի թիւ 2463 ձեռագիրը, որը բովանդակում է թ թիւս այլևայլ պատմագրերի՝ նաեւ Ղազարի եւ Սերէտոսի պատմութիւնները, գրուած է 1672 թուին Ղարզանի վարդապետի կամ դիրապետի հսկողութեամբ Բաղշում: Այդ ձեռագրից են ծագել 19րդ դարի կեսերին Սերէտոսի մի քանի ընդօրինակութիւնները. նոյնպէս եւ Ղազար փարպեցու ձեռագրերը այդ ձեռագրից են ընդօրինակուած (Տմիւս. Պատմագիրը Հայոց՝ Ղազար փարպեցին, Յատաշարան, Արարատ, 1891, էջ 148): Ար նշանակէ Ապարանցոց յետոյ են կատարուել Ղազարի Առաջին ձառի յայտաւումը եւ Անանունի կամ կեղծ-Սերէտոսի ստեղծուելը իրենց այն բոլոր փոփոխութիւններով, որոնք յիշեցինք վերեւում:

Այս խնդիրը միայն մի լուսաբանութեան կարիք ունի. Սերէտոսի առաջին հրատարակիչը Միհրդատեան յիշում է մի ուրիշ ձեռագիր եւս, բովանդակութեամբ Սերէտոսի պատմութեան եւ Յակոբ Միքայիլ հայրապետի աղօթքի, չէ ստում թէ ինչ առաջ եւ որը յետոյ, միայն “կայր եւս ի միջի նորին աղօթք... Յակոբայ Միքայիլացոյ”, Չեռագիրը գտնուած չէ, բայց Միհրդատեանը գրում է, “եւ գոյր ի վերջն զայս յիշատակարանս”, Արդ գրեցաւ... թուին ՌժԷ, ի սուրբ եւ սինկրեթական ուխտս Մարմաշինու վանաց .. Եւ էր դրոշմաւ ի ձախտան Պատմագիրը Սերէտոսի ի Հերակին:

Մեզ թուում է թէ այս յիշատակարանը եւ ՌժԷ թիւը Սերէտոսի պատմութեան գրուած են չէ վերաբերում, այլ նա կամ Յակոբ

1 Զատ ուղեւալ Ստահրացոյն Արտաշէրի որդւոյ Սասանայ բառնաւորը վերագրուած է Սերէտոսի (Խար. Բ. կժ):
2 Յայտմ ժամանակի սպանած Արտաշէր որդի Սասանայ զԱրտաւան Պարսից արքայ եւ թագաւորէ ինքն. Աստղիկ Ա. 4, էջ 51. Պարթ. 1885:

Հայրապետի աջօձքի գրութեան տարին է՝ յետոյ կամ մէջ կցուած Սերէտոս պատմութեան հետ կամ Ռժէ սխալ ընթերցանութիւնն է Ռժէ, եւ ահա թէ ինչու. նախ՝ Միհրդատեանը միեւնոյն այդ ձեռագիրը նկարագրելիս ասում է. «օրինակի միջն չգոյր յիշատակարան» եւ էր թերի. որ էր բոլոր գրով՝ Տին թուղթ բամպակայեայն եւ թուրքի թէ ի վիշտատաներորդ գարու գրեալ իցէ, Այս թուրքի թէ բառերը կամ նրա համար են, որ Ռժէ թուականը կցուած էր Յակոբ Հայրապետի աջօձքին միայն եւ կամ որ դժուար է եղել որոշել Ռժէ թէ Ռժէ կարգալ՝ Երկրորդ՝ Վիեննայի Միտիթ. Հայոց, Թ. 52 ձեռագիրը եւ Թ. 86 համամատութիւնը ունին մանրամասն յիշատակութիւն Գորոս Վարդ. Յովնանեանից եւ Սերտիբէ Պետրոսեանից գրուած 1851 եւ 1852 թուերին, այսինքն՝ Միհրդատեանի հրատարակութեան տարուամ, եւ չեն յիշում մի ձեռագիր Մարմաշինում գրուած Ռժէ = 1568 թուին, թէպէտ պիտի յիշէին՝ եթէ այդպիսինը լինէր, որովհետեւ նրանք խնամքով յիշում են յանուան է անանուն «նորոգ, օրինակների եւ տարածուած լուրերի մասին թէ Հաջագիտական նպատակները գեր են խաղում կեծեցու ձեռագրերի բուն արժանիքը: Երրորդ Հ. Յ. Վ. Յաշեան Թ. 52 եւ 86 ձեռագրերի նկարագրութեան մէջ նոյնպէս առիթ չունի յիշելու «Մարմաշինում, օրինակը, միայն էր 347ր (ցուցակ Վինն. Միտիթ. Հարց Մասնագրարանի ձեռագրերի) յիշում է կասկածով Միհրդատեանի անդեկութիւնը Ռժէ թուից յիշուած ձեռագրի մասին եւ աւելացնում, բացասելով Միհրդատեանից հաղորդածը՝ Ռժէ թուի ձեռագրերն իր ձեռքին ունենալու մասին, որ՝ «չըմբռնին ինքն էր ընդօրինակած»:

Այս բոլորը հարազատ է այն կասկածներին, որոնք Միհրդատեանից հրատարակութեան շուրջը գոյութիւն ունենին իւր ժամանակ. հաւաստին այն է ըսկ, որ ՌժէՆԱ = 1672 թիւն է ձեռն ինչպէս Ղազարի նոյնպէս եւ Սերէտոս ամենահին ձեռագրի մասին. իսկ Սիմէոն Ապարանցու օրինակը աւելի հնագոյն մի ձեռագիր էր՝ «Ղազարի Առաջին ձառով»:

Գաղով այն հարցին թէ «նրանցից է քաղուած եւ ո՞վ է յերկրեւ Սերէտոս = Անանունի Բ. դպրութիւնը ուրեմն եւ թէ ո՞վ է «Ղազարի Առաջին ձառը» Սերէտոսն առեւ — այս խնդիրը զիրար կարող ենք լուծել, եթէ հնարաւորութիւն ունենայիք էջմիածնում աշ-

խատելու, կամ եթէ խորնայնու գիտնացու հրատարակութիւնն ունենայիք ձեռքի տակ, կասկած չը կայ որ Սերէտոս Բ. դպրութիւնը սկզբից մինչեւ երկամուն եւ եռամուն ժամանակագրութիւնը, մինչեւ «Եւ եղև յետ մահուանն Արեւանայ՝ որդւոյ Վաղարշու», հասուածը բացառութեամբ Մատիկոնան գաղթի պատմութեան, առնուած է՝ ինչպէս օրիշները նկատել են, խորնայնուց եւ Ասողիկից (տես վերեւ էջ 60): Գաղով սինխրոնիզմ ցանկերին, պարզ է որ հին զարերի գործ համարուի նրանք չեն կարող, որովհետեւ միայն 11րդ դարից սկսած Հայոց մէջ սինխրոնիզմ ցանկեր են հանդէս գալիս եւ ի դարից սկսած՝ երբ պատմական մասնագրութիւնը խանձարուրի մէջ էր, ոչ ոք չէր մտածում սինխրոնիկի մասին, ոչլ միայն հասակոտոր ազգային յիշատակարաններով էր լրանում ամէն պահանջ: Մի շնամուր որ սինխրոնիկ պատմութիւն ունի Աւետիս Եւզոկիտցին՝ կազմած 1714 թուից, ձեռագիր է եւ անյայտ Քնացած քննադատութիւնից (Ներսիսեան Գպարանցի Թ. 26 ձեռագիրը): Յառաջարանի մէջ նա բացատրում է, որ ուսանող սերունդը անկարող է հանդիսանող պատմութիւնը սովորել առանց սինխրոնիկի, որովհետեւ յիշատակարանները շատ են եւ յաճախ հակասական: Այդ պատճառը, որ դրդել է Աւետիս Եւզոկիտցուն կազմել իր խիստ ծանր աշխատանքը, շատ նշանակալից է եւ պիտի լինի նրանց համար մանուակը, որոնք ենթադրում են թէ Անանունի սինխրոնիկը Ե. դարուց կարող է լինել: Հնարաւոր է ընդհակառակն մտածել, որ Աւետիս Եւզոկիտցու նման որեւէ պատմաւոր Սիմ. Ապարանցուց յետոյ Ղազարի Առաջին ձառը խնարարելու ժամանակ, սինխրոնիկ ցանկերը կազմեց եւ կցեց Անանունին այն չափով, որով պէտք էր Անանունը իրրեւ Սերէտոսի գործը ընդունելը կացուցանել — մինչեւ Սերէտոս շրջանը՝:

(Ընթարանալիս) ԳՐ. 82Ր. ԳՈՂՈՍԵՆՍ

1 Ներսիսեան Գպարանցի Թ. 26 ձեռագիրը մի քանի հանգամանակներով ուղղորութեան արժանի է. նախ՝ Հարկազան չըլածի պատմութիւնը Գր. Մապիտարոսի յիշած մոկիկներովը և հաղորդում է խորնայնու հասուածները սեղ սեղ սասնուտոր շափով են: Երկրորդ՝ Եւզոկիտցին էր գարը 1850—1714 մանրամասն է սիշել: Երրորդ՝ Աւետիս Եւզոկիտցուն շարունակել է նոյն ձեռագրի մէջ Յակոբ Լամարեցի ժողովակոց՝ յետոյ կաթմուղիկու եւ սրան էլ շարունակել է Ղ. Երկմիտս ոմն մինչեւ 1788 թիւը՝ խորանշարտի իր ժամանակուայ նշանուոր գեպարեի նկա.